

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 8/4

3 մարտի 2015 թ.

Քննարկվեց քաղաքացի Աշոտ Սիմոնյանի 18.02.2015թ-ի դիմում-գանգատը ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ պետի ՀՏ 03.02.2015 թ-ի թիվ 146 որոշման դեմ:

Քաղաքացի Աշոտ Սիմոնյանի գանգատում բերված փաստարկները.

Քաղաքացի Աշոտ Սիմոնյանը (այսուհետ նաև գանգատաբեր) հայտնում է, որ ՖՆ Էրեբունու ՀՏ պետի ՀՏ 03.02.2015 թ-ի թիվ 146 որոշմամբ իրենից գանձման է առաջադրվել 622.600 դրամ այն բանի համար, որ նա 14.08.2014 թ-ի արտադրության «Nissan Micra» մակնիշի ավտոմեքենան 21.08.2014 թ-ին վաճառել է իր քավորին՝ Ա.Վանեցյանին:

Ըստ գանգատի, Գանգատաբերը նշված մեքենան նա շահել է 02.06.2014 թ-ին ՀԴՄ կտրոնով և, քանի որ նա ուներ անձնական օգտագործման մեքենա, շահած մեքենան նվիրել է իր քավորին:

Գանգատաբերը հայտնում է նաև, որ ավտոմեքենայի հանձնման հետ կապված փաստաթղթերի ձևակերպման ժամանակ ՀՀ Ոստիկանության ՀՔԲ-ի աշխատակցին հայտնել է, որ այն նվիրում է իր քավորին, սակայն նրան պատասխանվել է, որ պետք է կնքվի մեքենայի առուվաճառքի պայմանագիր՝ դրանում նշելով որևէ գումար: Արդյունքում կազմվել է տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագիր, որում վաճառված մեքենայի գինը նշվել է 100.000 դրամ: Գործարքից հետո գանգատաբերը ավտոմեքենան նվիրել է իր քավորին:

Գանգատաբերը հայտնում է, որ իր և իր քավորի միջև որևէ գումարային շարժ վերոնշյալ պայմանագրի առումով տեղի չի ունեցել: ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ պետի կողմից պարտավորությունների գանձման որոշման կայացման համար հիմք է հանդիսացել կազմված նախնական հաշվարկը և www.auto.am կայքի տվյալների հիման վրա հաշվարկված պարտավորությունները:

Տվյալ դեպքում, քանի որ ՀՀ Ոստիկանության կողմից կազմվել է առքուվաճառքի պայմանագիր, գանգատաբերը 17.02.2015 թ-ին ներկայացրել է ԱԱՀ-ի հաշվարկ և ամբողջությամբ վճարել է պարտավորության գումարը:

Ելնելով վերոգրյալից՝ Աշոտ Սիմոնյանը խնդրում է ՖՆ Էրեբունու ՀՏ պետի 03.02.2015 թ-ի թիվ 146 որոշումը ճանաչել չեղյալ:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ քաղաքացի Աշոտ Սիմոնյանը 2014 թ-ի ապրիլ ամսին վաճառել է իր «Opel Vectra» մակնիշի ավտոմեքենան: Միևնույն ժամանակ 01.06.2014 թ-ին ՀԴՄ վիճակահանության արդյունքում՝ թիվ 00135557 կտրոնով շահել

է «Nissan Micra» մակնիշի ավտոմեքենա: Նշյալ ավտոմեքենան նա 21.08.2014 թ-ին առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ 100.000 դրամ պայմանագրային արժեքով, վաճառել է իր քավորին՝ Ա.Վանեցյանին:

Տվյալ դեպքում, Աշոտ Սիմոնյանի կողմից մեկ օրացույցային տարվա ընթացքում երկրորդ անգամ մեքենայի, այն է՝ ՀԴՄ վիճակահանության արդյունքում շահած «Nissan Micra» մակնիշի մեքենայի օտարման գործարքը էրեբունու ՀՏ կողմից դիտվել է որպես «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ պարբերությամբ նախատեսված ապրանքի մատակարարում: Արդյունքում ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ պետի կողմից 03.02.2015 թ-ին ընդունվել է թիվ 146 որոշումը, որով Աշոտ Սիմոնյանից գանձման է առաջադրվել 622.600 դրամ հարկային պարտավորության (ԱԱՀ-ի) գումար:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ պարբերության համաձայն՝ մեկ օրացույցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականությունը հանդիսացող նույն տեսակի հետևյալ գույքի՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), անձնական օգտագործման ավտոմեքենայի, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավտոտնակի՝ որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման դեպքերում ապրանքի մատակարարում է համարվում այդ ժամանակահատվածում երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի օտարումը, եթե օտարումը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում:


Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում վերոնշյալ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ պարբերությամբ սահմանված դրույթները կիրառելի չեն, քանի որ ըստ էության ՀԴՄ վիճակախաղի արդյունքներով շահած ավտոմեքենան Աշոտ Սիմոնյանի համար չի կարող դիտվել որպես ապրանքի ձեռքբերում: Հետևապես, ՀԴՄ վիճակահանության արդյունքում շահած «Nissan Micra» մակնիշի ավտոմեքենայի օտարման գործարքը ենթակա չէ ԱԱՀ-ով հարկման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ պետի 03.02.2015 թ-ի թիվ 146 որոշումը:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՍԻՄՈՆՅԱՆ

